

ՀՈՒՇԱԳԻՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ք.Երևան
2011թ.

նոյեմբերի

«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ն, այսուհետ՝ «ՀԿԵ» ՓԲԸ, ի դեմս գլխավոր տնօրեն Շ.Ն.Շայդուլլինի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը, այսուհետ՝ ՀՀ ԱԻՆ, ի դեմս նախարար Ա.Երիցյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, համատեղ հիշատակվելիս՝ Կողմեր,

կարևորելով Հայաստանի Հանրապետության տարածքում արտակարգ միջադեպերը օպերատիվ կերպով վերացնելու և ենթակառուցվածքի վնասման և մարդկանց կյանքին սպառնալիքների կանխարգելման (ռիսկերի նվազեցման) հարցը,

հաշվի առնելով արտակարգ իրավիճակներում վթարափրկարարական աշխատանքների ժամանակին և պատշաճ կատարման սկզբունքի մեծ հասարակական-քաղաքական նշանակությունը,

ընդգծելով ՀՀ ԱԻՆ-ի և «ՀԿԵ» ՓԲԸ-ի նյութատեխնիկական բազայի օգտագործմամբ արտակարգ միջադեպերի առաջացմանը նպաստող պատճառների և պայմանների վերացման հարցի կարևորությունը,

համոզված լինելով, որ Կողմերի միջև արդյունավետ համագործակցությունը կարևոր ներդրում կհանդիսանա Հայաստանի Հանրապետության ենթակառուցվածքին և մարդկանց կյանքին սպառնացող վտանգի վերացման գործընթացի կատարելագործման հարցում,

փոխադարձաբար ընդունելով Կողմերի կանոնադրությունները, կանոնակարգերը, նպատակները, խնդիրները և գործունեության սկզբունքները և չքույլատրելով Կողմերից յուրաքանչյուրին վնաս հասցնող գործողություններ,

արձանագրում են կոնստրուկտիվ համագործակցության մտադրությունը և համաձայնվում են հոսյալի մասին:

Հոդված 1

Սույն Հուշագրի շրջանակներում համագործակցությունը ներառում է.

1) Տեխնաձին վթարների, տարերային աղետների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման և վերացման ոլորտում համագործակցություն ու համատեղ միջոցառումների իրականացում.

2) Տեխնաձին վթարների և տարերային աղետների կանխատեսման, մոնիտորինգի և վաղ ազդարարման ոլորտում համատեղ գործունեություն.

3) Բնակչության իրազեկման և զանգվածային լրատվության միջոցների հետ աշխատանքի ոլորտում.

4) Քաղաքացիական պաշտպանության ոլորտում համատեղ գործունեություն.

5) Արագ արձագանքման, վթարա-վերականգնողական, որոնողափրկարարական, տարհանման և այլ աշխատանքների համատեղ կազմակերպում և փոխօգնության ոլորտը.

6) Կադրերի պատրաստման և վերապատրաստման, ինչպես նաև ուսումնական բազաների ձևավորման ոլորտը.

Հոդված 2

Սույն Հուշագրի իրականացման նպատակով, Կողմերը մտադրված են՝

1) անցկացնել համատեղ խորհրդատվություններ կամ մասնակցել Կողմերի մարմինների կամ կառույցների աշխատանքներին,

2) ստեղծել համատեղ աշխատանքային խմբեր,

3) իրականացնել տեղեկատվության փոխանակում,

4) փոխանակել Կողմերի կողմից կուտակված փորձը և գիտելիքները գործունեության համապատասխան բնագավառներում Կողմերից յուրաքանչյուրի կողմից կազմակերպվող միջոցառումներում Կողմերի ներկայացուցիչների մասնակցության միջոցով,

5) իրականացնել համատեղ նախապատրաստված ծրագրերը, նախագծերը և միջոցառումները,

6) իրականացնել համատեղ գործունեության կազմակերպման հարցերով, ինչպես նաև Կողմերի գործունեության արդյունքների մասին տեղեկատվության փոխանակման, հրապարակման և տարածման աշխատանք:

Հոդված 3

Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում երկու Կողմերի կողմից ստորագրման պահից և գործում է մինչև դրա լուծման պահը Կողմերի փոխադարձ համաձայնությամբ կամ Կողմերից մեկի ցանկությամբ՝ նախապես ծանուցելով մյուս Կողմին առնվազն 15 օր շուտ:

Հոդված 4

Սույն Հուշագիրը կազմված է հայերեն և ռուսերեն լեզուներով հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երեք օրինակից, մեկ օրինակը՝ ՀՀ ԱԻՆ-ի համար, երկուսը՝ «ՀԿԵ» ՓԲԸ-ի համար:

Հայաստանի Հանրապետության
արտակարգ իրավիճակների
նախարարություն


«Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ

ՀՀ, ք.Երևան, Միկոյան 109/8


ՀՀ, ք.Երևան, Տիգրան Մեծի 50

Նախարար

Գլխավոր տնօրեն



Ա. Գ. Երիցյան



Շ. Ն. Շայդուլլին